Հավելված
ՀՀ վարչապետի 2020 թ.
հուլիսի 31-ի N 885-Ա
որոշման

Ց Ա Ն Կ
«ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը (ընդունվելիք իրավական ակտերի տեսակն ու վերնագրերը)	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական հիմքը՝ այն հոդվածը, մասը կամ կետը, որով նախատեսված է համապատասխան իրավական ակտի ընդունումը
1.	«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2020 թ. 4-րդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի 1-ին կետ

2.	«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2021 թ. 3-րդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետ
3.	«Բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտի վերաբերյալ ոստիկանություն հաղորդում ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2021 թ. մարտի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետ
4.	«Սեռական բնույթի բռնության ենթարկված երեխաների վարման կլինիկական ուղեցույցը հաստատելու մասին» հրամանի նախագիծը ՀՀ առողջապահության նախարարի հաստատմանը ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն	2021 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին կետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ